



## 67. ՈՒՐՍԿԸՐԻԶ

Խեղճ մարթըմ կիլնը, ինք, ուր լաճ:

Լաճուն կըսը. - Տըղա՛, իս անցկում չարչարվա, բանա, բանա, չըհավելցըցը, շիվար մընացը: Տիւ ա՛րը, գընա՛ հուրիշ քաղաքըմ, բա՛նը, պալքըմ գանկընանաս: Լա քանը կանաս մըտը մա սանաւտքարըմ, քի սանաթըմ սո՛վըր:

Լաճ կիլնը, կը յա:

Կը յա, կը յա, կը յա Ստանբուլ կիլնը տուս:

Կէրթա մա ուրսկըրի՛ն, կիլնը աշկերտ: Տարի՛մ կը լըմըննա, քանց ուրսկըրիչ շատ իմաստուն կիլնը:

Թագավորը պըզտիկ ախըչկան խուրզմաթքար կը յա պագա՛ր՝ մսե, բանե, ուր բիրը, իփը:

Կէրթա շուկեն, կը տեսնա՝ տեղըմ շատ խալկ պահրավաճան տուքնը հանաճ: Ուր միտ վե էսաց. «Յամ, տեսնամ մա ի՞նչ կը, անցկում պահրավաճ հանտե»:

Գընաց, ուրսկըրիչըմ տեսավ կի հանտե, չուտին, չըխըմին, անու նըմուշին թանաշա անին: Անու աղկըլ գընաց, մընաց չուր կեսօրին, մալեն կանչից, էսաց. «Հա՛յ, հո՛յ, մա ինչ արը խա՛ ծյի, իս խըլխուսն տը յեր, մա էլավ կեսօր, իմ խանըմ ըզի տուս տը խանը»:

Էլավ, գընաց տուն:

Թագավորը ախչիկ էսաց. - Ուրմըսպը՛, ան խըլխուսն էր, մա էլավ կեսօր, տիւ հո՛ւրտը յեր:

Ան էլ էսաց. - Ան ուր իս տեսա, տիւ խիս, տիւ թուրչար չըս իգա՛:

Ան էլ էլավ, սինի՛մ ուրսկը էլից, տարավ, էսաց. - Մըհա իմ խուրզմաթքար սուք կըսը յան անդուրտ: Թը ուր սուք սը, տը թըլիմ ծով:

Ինք, ուր խուրզմաթքար առին սինի՛մ ուրսկը, գանցին, գանցին ուրսկըրչու տուքան, թագավորը ախըչկան աղկըլ գընաց, տեպավ գետին: Պոմ մընաց, աղկըլ իրը վերա, էլավ, գընաց ուր տուն:

Կանչից, քառսուն խատ լըղըմչը իկին:

Էսաց. - Լըղըմչի՛ք, ըստուցա չուր մա ֆըլան ուրսկըրչը տուքան լըղըմ տ՛անեք, մարթ չիմանա, ուրը իմանան, ծյի վըզքյիր տը տամ գանիլ:

Լըղըմչիք կը պաշլային թախ ուրինց բան: Ընչ խա ճամխը, կը խասնին տուրքընքտիրուն, տուրքընքտիրու տակ վե ընչ կը բանին, կը խին, կը խարցընին:

Կըսին. - Ատ ի՞նչ տ՛անեք:

Անուըքըն էլ կըսին. - Ծիւր տը գա յա թագավորը սարեն:

Լըղըմ կը պըրծնին, կը յան մա թագավորը ախչիկ, ուրինց հաղկ կառնին, կը յան:

Թագավորը ախչիկըն էլ կը ճամխը ուրսկըրչուն լըղըմ վե, կըսը. - Ա՛րը մի մեհվան:

Ան էլ կըսը. - Զյի խուրզմաթ կա, ուրը ան ըզի կուզը, թըղ ան գա:

Խուրզմաթքար լըղըմ վե կը գա, թագավորը ախըչկան կըսը: Ախչիկըն էլ կիլնը, լըղըմ վե կերթա ուրսկըրչու մոտ:

Ախչիկ կըսը. - Ան վըրե՞ տու չիկիր, յա՞ն տու կը վախանաս:

Անուըքըն էլ ուրինց խապարքիր կանին մեկ, կառնը զուրս-կըրիչ, կերթա:

Ան մեկէլ օր կիլնը սովորութ, համեն օր կը յա մա թագավորը ախչիկ:

Ան մեկ օր թագավոր կիլնը թավտիլ մա ժողովըրտին, մութ կը տա, կը գա, ան ուրսկըրչու տուքնը հիրճիվ կը նըստը, ուրսկըրչուն կըսը. - Մեհվան չը՞ս շախը:

Ան էլ կըսը. - Գըլխո՛ւս վերա:

Անուըքն էլ գանցին ուրսկըրչու տուքան: Մութ իտու, տուքնը մեք գետնուց քափանքըմ բացվավ, ուր ախչըկան խուրզմաթքար էլավ տուքնը մեք:

Էսաց. - Ուրսկերի՛չ, խանըմ քյի կանչը:

Ան էլ գընաց, անու ականչ վե էսաց. - Հասօր գընա՛, սա՛ մեհվան կա:

Խուրզմաթքար գընաց, թագավորը ախչըկան էսաց:

Ախչիկ էսաց. - Գընա՛ սա՛ թըղ առնը ուր մեհվընքտիր, գա ըստա:

Թագավորըն էլ սատրագամին էսաց. - Նա ընչ ըսկընա կը գա, կը յա, ան իմ ախչըկան խուրզմաթքարն ը:

Սատրագամըն էլ թագավորին էսաց. - Խա՛, ուրլա՛, անցկուն ը, քիւ ախչըկան խուրզմաթքարն ը:

Ուրսկերիչն էլ թագավորին էսաց. - Դավրե՛շ պապա, ի՛լը, յանք մի տուն:

Ֆանար կը պըռցին, էլան, ընկան լըղըմ վե գացին թագավորը ախչըկան մոտ:

Թագավոր էսաց. - Սատրագամ, նա հօդեն իմ ախչըկան ը:

Սատրագամըն էլ էսաց. - Խա՛, ուրլա՛, անցկուն ը: Նա հօդեն քիւ ախչըկան ը:

Թագավոր էսաց. - Նա սեհրը յը՞, նա ի՞նչ կը:

Էսաց. - Իս ի՞նչ գըտնամ:

Խաց կերան, պըրծան: Ուրսկերիչ առից ըգթագավորը ախչիկ, գացին հօդեն: Թագավոր, ուր սատրագամ մընացին ան մեկ հօդեն:

Գիշիր մընացին չուր լուս, ընչ լուսցավ, ուրսկերիչ էսաց. - Դավրե՛շ պապա, ի՛լը յանք:

Թագավոր առից, իպը, տուքնից տուս էխան:

Թագավոր գընաց ուր սարեն, նըստավ վար ուր թախթին:

Էսաց. - Սատրագամ, ի՞նչ անինք խա՛ ան մարթուն: Պիրինք վի՞զ կըտրինք, պիրինք կախի՞նք, ի՞նչըխ անինք:

Էսաց. - Թագավոր՝ ապրած կենաս, պիրիս կախիս, դուսեն տըսին՝ քիւ ախչիկ ուրըղսպը յը:

Թագավոր էսաց. - Ապա ի՞նչըխ անիմ:

Էսաց. - Ա՛ռ, բի՛, արա՛ քյի չըբուխչը:

Թագավոր կանչից, առից, իբը, արավ ուր չըբուխչը: Քանի՛մ օր ընցավ վերեն, թագավոր էլավ, գընաց մա ժողովըրտին կան գալու:

Գընացին, մա խանի'մ մեհվան էլան, խըլխուռն էլանվ մա հախալըրին լվացվավ, տեսավ մեկ կընիկ փանջարից ուր մեկ մատ շանք խոու:

Թագավոր էսաց ուր միտ վե. «Սըհաթը մեկին ըզի կուզը»:

Լվացվավ, պըրծավ, գընաց նըստավ ուր հողեն, մա ան խանին: Սընաց, սատրազան գընաց, լվացվավ: Ան կընիկ երկու մատ շանք խոու:

Վուըզիր ուր միտ վե էսաց. «Նա սըհաթ երկուին ըզի կը կանչը»:

Լվացվավ, պըրծավ, գընաց:

Դոր խուըզմաթքար իրը վար հաղալըրին, ան կընիկ ուր իրիք մատ շանք խոու:

Ան էլ ուր միտ վե էսաց. «Նա սըհաթը իրիքին ծյի կը կանչը»:

Ան էլ գընաց ուր թագավորը հողեն:

Թագավոր սըհաթ մեկին գընաց մա ան կընիկ, հանտե թագավորը խամար սեղան պատրաստեր էր, կընիկըն էլ փարտեն քյեշեր էր, մըտիր հիտիվ փարտին:

Թագավոր գընաց, նըստավ, խաց կերավ, պըրծավ:

Կընիկ էսաց. - Խուըզմաթքար, ատ սեղան ա'ռ, քի' ըստա:

Ան էլ թագավորին էսաց. - Կիլնիս, կերթաս իմ հողից, յան չէ՝ քու ճուլ փըրտուռ քու ականչ տը մընա:

Թագավորն էլ էլավ, փախավ, գընաց ուր տեղ:

Սըհաթ երկուսին վուըզիր գընաց:

Ան էլ ան թարզանակ սեղան հազրուկ հանտե էր, նըստավ, խաց կերավ, պըրծավ:

Կընիկ էսաց. - Խուըզմաթքար, ատ սեղան ա'ռ, քի':

Ան էլ էսաց. - Սատրազան կիլնիս, ինչ կիլնիս, կիլնիս տուս իմ հողից, յան չէ՝ քու ճուլ փըրտուռ քու ականչ տը մընա:

Սատրազան փախավ, իրը ուր տուռ:

Սըհաթ իրիքին թագավորը խուըզմաթքար գընաց:

Անու խամար էլ սեղան հազրուկ էր, գընաց նըստավ, կերավ, պըրծավ: Սեղըն վերա կազըմ կեր, մեկ բաշլա: Ան էլ կուշտ խաց կերավ, դանակ հանտե վար սեղնին էր, ան էլ առից, զան կազ արավ չուրս կըտուր, սինու չուրս կուղըմ փըրտուռըմ

իտը, բաշլեն էլ փըրտից, ծեթկանցուց, իլից սեղնը մեջ: Դանակըն էլ խըփից, իտը մա սեղնին:

Կընիկ էսաց. - Խուըզմաթքա՛ր, սեղան ա՛ռ, բի՛:

Սեղան տարավ մա կընիկ, կընիկ էլ էսաց. - Ան իմ բա-  
բաթն ը:

Էլա՛վ, գընաց կընկան մոտ:

Կընիկ էսաց. - Ան վըրե՞ կազ արեր էր չուրս կըտուր, սինու չուրս կուղըմ մեկ տըրեր էր, ան բաշլեն անցկուն ծեթկանցեր էր, ան դանակ խըփեր էր, տըրեր էր անտե:

Էսաց. - Ինչըխ ան դանակ խըփուկ ը, անցկուն էլ իմ բերան խըփուկ ը: Ինչըխ ան կազ իս արեր էր չուրս կըտուր, թագավոր ըզի անը չուրս կըտուր, համեն տա՛րկխը վերեն մեկ կախը, իս քու նամուս չըմ թափը: Թագավոր ըզի ան բաշլը թա՛րզ ըզի փըրտը, էլմէլ իս ձեն չըմ խանը:

Ուր բան պըրժավ, իրը մա թագավոր:

Թագավոր էլա՛վ, գացին թա՛ղ ուրենց սարեն:

Ճամխը խիտ սատրագամին էսաց. - Փուրձանքըմ իկիր իմ վերեն:

Սատրագամ էսաց. - Ի՞նչ կը:

Էսաց. - Ապա ինչ իս գացը լվացա, կընիկըմ ուր մատ էխան տուս, իս էլ սիցը՝ կայե, ձի սըհաթը մեկին կը կանչը, իս էլ քացը: Ան տեղ խաց տըրուկ էր, կերա, մեկ էլ ձյի էսաց՝ չէ՛, տու թագավոր իլնիս, ինչ ուր իլնիս, ի՛լը, գընա՛:

Սատրագամըն էլ էսաց. - Ինչըխ քու գըլոխ իկիր, անցկուն էլ իմ գըլոխ իկիր:

Թագավոր էսաց. - Ուր քու գըլոխ էլ իկիր, մըկա խուըզ-  
մաթքարին էլ իկիր:

Բիրին խուըզմաթքարին խա՛րցընիցին:

Էսաց. - Իս թու բա՛մ չըմ տիսիր:

Էլան գացին սարեն, նըստան:

Թագավոր էսաց. - Յա՛ն տը սիս, յա՛ն չըխոմ քու միս քալբաթնով տը քեյշիմ:

Թագավոր ինչըխ արավ, չէսաց:

Ան էլ իպը, ան խանը տըռան հառաջ տը խեխտեր, տա-  
լալըն էլ էլա՛վ, կանչից, էսաց. «Թագավորը ծառեն խապարըմ կա,  
թագավորին չըսը, տը կախին: Եկե՛ք թամաշա»:

Ան խանը կընդհատե՛ր էլ իմացավ, էլավ փանջարեն վե իրիշ-  
կից, կը խը՝ զան մարթն ը, ինչ տը կախին: Նուռըմ էզար հիրճիվ  
ան մարթուն (յանե ինչըխ նա նուռ ցըվըրվավ, անցկում իմ  
նամուս ցըրվը, ըզքի թըղ չըկախին)<sup>31</sup>:

Խուրզմաթքար էսաց. - Ըզի բերե՛ք տակ, իս թագավորին տը  
սիմ:

Տըղեն բիրին տակ, տըվին բըժըշկին, աղեկցավ, զընաց  
թագավորին էսաց, հըմեն քըսա արավ:

Թագավոր էսաց. - Քու մըրազ ի՞նչ կը, թե իմ թագավո-  
րութենը կեսըն տամ քի:

Ան էլ էսաց. - Քու թագավորութեն բըմբարա՛ք իլնը քու  
խամար, տու ինչ կը տաս, տու գըտիս:

Ինքըն էլ էսաց. - Ա՛րը, իմ պըզտիկ ախչիկ տամ քի:

Ան էլ զընաց, թագավորը ծեռ պագնից, անու պըզտիկ ախ-  
չիկ առից:

Նուր յոթ օր, յոթ գիշիր խարսնիս արին, անունը խասան  
ուրինց մըրագին: Դուք էլ խասանեք ծյի մըրագին:



---

<sup>31</sup> Ծ. Ա.: